



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22 հունիսի, 2016 թ.

ք. Երևան

«ՏԻՄ-Երում առկա կոռուպցիոն ռիսկերը» հակակոռուպցիոն միջոցառման

2016 թվականի հունիսի 22-ին Գյումրի քաղաքի «Արաքս» հյուրանոցում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «ՏԻՄ-Երում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով: Միջոցառման նպատակն էր ծրագրի շրջանակներում ՏԻՄ-Երում առկա կոռուպցիոն ռիսկերի վերահանումը և համապատասխան լուծումների նախանշումը:

«Կառավարությունը պետք է ցույց տա հակակոռուպցիոն պայքարի հաջողված օրինակներ և հասարակությունը զգա այդ փոփոխություններն իր կյանքում», - իր բացման խոսքում նշեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը: Նա տեղեկացրեց ներկաներին, որ կառավարության հետ համագործակցության շրջանակներում իրենց կողմից ներկայացվել են ապօրինի հարստացման քրեականացման և հակակոռուպցիոն անկախ մարմին ստեղծելու վերաբերյալ առաջարկներ, որոնք կառավարության կողմից ընդունվել են, և այժմ օրինագծեր են մշակվում, որոնք այս տարվա աշնանը կներկայացվեն Ազգային ժողովին:

Շիրակի մարզպետ Հովսեփ Մինոյանը և Գյումրու փոխքաղաքապետ Վաղարշակ Մխիթարյանը էապես կարևորեցին հակակոռուպցիոն պայքարը: Միաժամանակ նրանք չհամաձայնեցին միջոցառման խորագրի հետ՝ նշելով, թե այս դաշտում կառուպցիոն խնդիրներ չկան: Ի պատասխան այս պնդմանը՝ Կարեն Զադոյանը նշեց, որ տարիներ առաջ նոտարական համակարգի ոլորտի պատասխանատուները նույնպես պնդում էին, թե համակարգում կոռուպցիոն ռիսկեր չկան, սակայն մոնիթորինգից հետո նախկին վարչապետը հայտարարեց, որ նոտարական համակարգում մեծ կոռուպցիոն խնդիրներ են առկա:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քրեակատարողական և հակակոռուպցիոն քաղաքականության մշակման վարչության պետ Կարեն Հակոբյանի խոսքով՝ ՏԻՄ-Երում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու լավագույն տարբերակներից մեկը նրանց լիազորություններն ընդլայնելն է և հաշվետվողական լինելը ոչ թե վերադասին, այլ համայնքի անդամներին:

Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանը նույնպես ընդգծեց, որ ՏԻՄ ղեկավարը պետք է հասկանա, որ հաշվետու է ոչ թե վերադասի, այլ իրեն ընտրող համայնքի անդամներին: Ըստ նրա՝ համայնքի անդամները պետք է ունենան կայացած վերահսկողության մեխանիզմ, պետք է լուծվեն մի շարք բյուրոկրատական խնդիրներ, իսկ համայնքի ղեկավարները համայնքի անդամների հետ պետք է անմիջական շփում ունենան:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ Մարատ Ատովյանը ներկայացրեց բարեխղճության ապահովման կարևորությունը համայնքային ծառայության ոլորտում և միջազգային փորձը: Իսկ ծրագրի մյուս տեղական փորձագետ Մարիամ Զադոյանը ներկայացրեց այս ոլորտում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման նպատակով ՔՀԿ-ների հետ համագործակցության կարևորությունն ու հեռանկարները: Նա նշեց, որ արդյունավետ է մասնակցությունը ռազմավարությունների մշակմանը և որոշումների կայացմանը, վերահսկողության իրականացումը, կոռուպցիայի դեմ ազգային հանրային իրազեկության արշավների իրականացումը և այլն:

Ելույթներին հաջորդեցին լուրջ քննարկումներ: Մասնակիցները, այդ թվում և Շիրակի մարզի համայնքապետերը, բարձրացրեցին համակարգային հարցեր ու խնդիրներ էին: Միջոցառման արդյունքում հավաքագրված առաջարկությունները քննարկման համար կուղարկվեն համապատասխան պատկան մարմիններին, ինչը կնպաստի ՏԻՄ-Երի ոլորտում արդյունավետ բարեփոխումների իրականացմանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանում և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կորսված գրավները վերականգնվեն: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00: հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.armla.am>: Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ. փոստ՝ info@armla.am:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ինֆորմացիայի ազատության կենտրոն Հասցե Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նուս-հատու, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողակամությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս +374 10 229610
Հեռապատճեն +374 10 229615

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիկինգի դեմ պայքարի, բնագիտական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռապատճեն՝ +37410 56 03 60

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95